ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 875-Ա

ՄՈՒՇԵՂ ՄԱՆՈՒԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ, ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղի Աշտարակի խճուղի թիվ 10 հողամաս հասցեի սեփականատեր Մուշեղ Մանուկի Մանուկյանը դիմել է Խոյի համայնքապետարան, իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք սեփականության վկայական թիվ N 10022025-04-0001 / Դաշտ գյուղի Աշտարակի խճուղի թիվ 10 հողամաս հասցեին կից, համայնքային սեփականություն հանդիսացող Դաշտ գյուղի Աշտարակի խճուղի թիվ 10/1 հողամաս հասցեում գտնվող 0,0125 հա մակերեսով, հողամասի ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքով իրեն օտարելու խնդրանքով: Նշված հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այն արտաքին պարագծով պարփակված է ընդլայնվող հողամասով և հնարավոր չէ օտարել որպես առանձին գույքային միավոր.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղի Աշտարակի խճուղի թիվ 10 հողամաս, 04-037-0010-0031 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,07914 հա մակերեսով հողամասին կից համայնքային սեփականություն հանդիսացող, Դաշտ գյուղի Աշտարակի խճուղի թիվ 10/1 հողամաս հասցեում, 04-037-0009-0041 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,0125 հա մակերեսով հողամասն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի միջոցով օտարել Մուշեղ Մանուկի Մանուկյանին :

2. Մուշեղ Մանուկի Մանուկյանի հետ կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները պետական գրանցման:

3. Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 152700 / մեկ հարյուր հիսուներկու հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ պետք է վճարի Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղի ֆոնդային եկամուտների **900325167139** հաշվեհամարին: 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 12
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2025 թվականի N 874-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ, 50-րդ կետերով և հիմք ընդունելով Մուշեղ Մանուկի Մանուկյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-037-0010-0031 և 04-037-0009-0041 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերը միավորել և տալ մեկ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Դաշտ գյուղ, Աշտարակի խճուղի թիվ 10 հողամաս:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 12
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ.Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 սեպտեմբերի 2025 թվականի N 873-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման **2024EYQTJ8**, ծածկագիրը և հիմք ընդունելով Արփինե Գեղամի Ավագյանի դիմումը՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի Անկախության փողոց թիվ 30 բնակելի տուն հասցեում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացիներ Արփինե Գեղամի Ավագյանին իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի Անկախության փողոց թիվ 30 բնակելի տուն հասցեում գտնվող /իրավունքի պետական գրանցման վկայականի N 2633938 / 04-011-0032-0005 կադաստրային ծածկագրով 0,11966 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված ընդամենը 510,5 քմ արտաքին մակերեսով ինքնակամ շինությունները, / 404 քմ մակերեսով բնակելի տուն, կառուցված՝ 2010թ., 19,8 քմ մակերեսով մառան,

կառուցված՝ 2010թ., 71,9 քմ մակերեսով անասնաշենք, կառուցված՝ 2010թ. և 14,8քմ մակերեսով պարիսպ կառուցված՝ 2010թ.:

2. Ինքնակամ կառույցների օրիկանացման համար սահմանված վճարը կազմում է 524800 / հինգ հարյուր քսանչորս հազար ու հարյուր / ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Արփինե Գեղամի Ավագյանը/ անձնագիր՝ AO0336665, տրված 26.08.2025թ, 006–ի կողմից/ պետք է 60-օրյա ժամկետում վճարեն Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների **900325188150** հաշվեհամարին՝ 524800 / հինգ հարյուր քսանչորս հազար ու հարյուր / ՀՀ դրամ, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

5.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

6.Արմավիրի մարզի Խոյ համայնքի Այգեշատ գյուղի 04-011-0032-0005 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Այգեշատ, Անկախության փողոց թիվ 30 բնակելի տուն:

7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ՅԱՅԼՈՅԱՆ**

2025 թվականի սեպտեմբերի 11
Խոյ համայնք գ.Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ.Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-888-999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 սեպտեմբերի 2025 թվականի N 872-Ա

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 190,2 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՄԱՌԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՆՈՒԹ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի և հիմք ընդունելով Նարեկ Արթուրի Ղուկասյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի Ա. Թամանյան փողոց թիվ 1 բնակելի տուն հասցեում գտնվող 04-055-0056-0001 կադաստրային ծածկագրով 0,1531 հա մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման նշանակության հողամասի վրա կառուցված 04-055-0056-0001-002 ծածկագրով ըստ ներկայացված հատակագծի 190,2 քմ մակերեսով մառան շինության, գործառնական նշանակությունը փոխել խանութ գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025 թվականի սեպտեմբերի 10
Խոյ համայնք գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 սեպտեմբերի 2025 թվականի N 871-Ա

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի պահանջներով և հիմք ընդունելով 2025 թվականի սեպտեմբերի 10-ի Հայաստանի Հանրապետութ-յան Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի մրցութային հանձնաժողովի ձևավորման նպատակով հատուկ ծրագրով ընտրված հանձնաժողովի անդամների ցանկը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել 2025 թվականի սեպտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից հաստատված կարգի համաձայն:
3. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման իրականացման համար լիազորված անձ ճանաչել համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ՝ Մարիամ Գրիգորյանին, որը պարտավորվում է մասնակիցներին բացատրել թեստավորման անցկացման հետ կապված տեխնիկական հարցերը, արձանագրել և հանձնաժողովի անդամների հետ միասին ստորագրել նիստերի արձանագրությունները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ.ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 10
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարի
2025 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 871-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՀ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ	ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ	ՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ
1	Հարությունյան Լիաննա	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ	Արմավիրի մարզպետարան
	Ղորղանյան Արշակ	Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ	ՀՀ Արմավիրի մարզպետարան
3	Շառոյան Գրապիոն	Աշխատակազմի քարտուղար	Խոյի համայնքապետարան
4	Պետրոսյան Նելլի	Խոյի համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանա-կան, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ	Խոյի համայնքապետարան
5	Պետրոսյան Արտակ	Խոյ համայնքի ավագանու անդամ	Խոյ համյանք
6	Սահակյան Ալմաստ	<<Այգեշատի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրեն	Գիտական և ուսումնական հաստատության ներկայացուցիչ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.ՇԱՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 սեպտեմբերի 2025 թվականի N 870-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Մարիաննա Խունոյանի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 8-ին ներկայացրած հայտը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Մարիաննա Խունոյանին Խոյ համայնքի Ծիածան գյուղի Ծիածանի խճուղի 24 հասցեում գտնվող հիմնական շինությունում /կադաստրային ծածկագիր 04-053-0022-0007/ կազմակերպել և իրացնել հանրային սնունդ՝ 2025 թվականի 3-րդ եռամսյակի համար:

2.Խոյի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնին՝ անհատ ձեռնարկատեր Մարիաննա Խունոյանին տալ համապատասխան թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 09
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 սեպտեմբերի 2025 թվականի N 869-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲԱՑՕԹՅԱ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Մարիաննա Խունոյանի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 8-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Մարիաննա Խունոյանին Խոյ համայնքի Ծիածան գյուղի Ծիածանի խճուղի 24 հասցեում գտնվող հիմնական շինությունում /կադաստրային ծածկագիր 04-053-0022-0007/ զբաղվելու բացօթյա առևտրով՝ 2025 թվականի 3-րդ եռամսյակի համար:

2.Խոյի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնին՝ անհատ ձեռնարկատեր Մարիաննա Խունոյանին տալ համապատասխան թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 09
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2025 թվականի N 868-Ա

ԿԱՍԵՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավար Լ. Յայլոյանս, քննության առնելով թիվ 73/25 վարչական վարույթի գործը՝ ՀՀ քաղաք Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Գերցենի փողոց 2 հասցեի բնակիչ Վարազդատ Գագիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող, Խոյ համայնքի Արշալույս գյուղի 32 փողոց, 1 հասցեում գտնվող 04-021-0096-0011 կադաստրային ծածկագրով հասարակական կառուցապատման հողամասի վրա հեղուկ գազի և բենզինի լիցքավորման կետեր տեղադրելու մասին, ***պարզեցի, որ***.

Վարազդատ Գագիկի Սարգսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի 32 փողոց 1 հասցեում գտնվող, 04-021-0096-0011 ծածկագրով հասարակական կառուցապատման հողամասի վրա ինքնակամ տեղադրել է հեղուկ գազի և բենզինի լիցքավորման կետեր, ինչի կապակցությամբ ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի գրության, տարածքի լուսանկարների հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 31-րդ հոդվածի հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Անձի կողմից իրականացվել է ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված խախտում, որն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը Վարազդատ Գագիկի Սարգսյանին ուղարկվել էր փոստային առաքմամբ 2025 թվականի օգոստոսի 1-ին: Համաձայն «Հայփոստ» ՓԲ ընկերության հետևել բեռնային համարով LO128945445AM առաքանու մանրամասների՝ 2025 թվականի օգոստոսի 4-ին ծանուցագիրը պատրաստ է եղել ստացման, սակայն հասցեատերն այն չի ստացել: Ծանուցագիր ուղարկվել է նաև 2025 թվականի օգոստոսի 20-ին: Համաձայն «Հայփոստ» ՓԲ ընկերության հետևել բեռնային համարով LO129189169AM առաքանու մանրամասների՝ 2025 թվականի օգոստոսի 23-ին ծանուցագիրը պատրաստ է եղել ստացման, սակայն հասցեատերն այն չի

ատացել: Ծանուցումը հրապարակվել է նաև հրապարակային ծանուցումների azdarar.am կայքում, ուստի Վարազդատ Գագիկի Սարգսյանը համարվում է պատշաճ ծանուցված, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վերոգրյալից և վարչական վարույթի շրջանակներում լսում իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2–րդ մասի 2-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ «Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի կատարումն ապահովելու նպատակով՝ Խոյ համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 13-ի N 821-Ա որոշմամբ Վարազդատ Գագիկի Սարգսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցվել էր:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը՝ 2025 թվականի սեպտեմբերի 8–ին հարուցված վարչական վարույթը համարել վերսկսված:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի գրությունը:

Տարածքի լուսանկարները:

2025 թվականի օգոստոսի 13-ին և օգոստոսի 29-ին վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունները:

Խոյ համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 13-ի «Վարազդատ Գագիկի Սարգսյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնելու մասին» N 821-Ա որոշումը և այն փոստային առաքմամբ ուղարկած լինելու փաստը հավաստող 2025 թվականի օգոստոսի 18-ի LO129148832AM կոդով ստացականը:

ՀՀ Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 4-ին կազմված տեղազննման ակտը, տարածքի լուսանկարները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարազդատ Գագիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի 32 փողոց 1 հասցեում գտնվող 04-021-0096-0011 կադաստրային ծածկագրով հասարակական կառուցապատման հողամասի վրա ինքնակամ տեղադրվել են հեղուկ գազի և բենզինի լիցքավորման կետեր:

Խոյի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից 2025 թվականի սեպտեմբերի 4-ին կազմված տեղազննության ակտից և տարածքի լուսանկարներից պարզ է դառնում, որ վերոնշյալ հասցեում հայտնաբերված ինքնակամ տեղադրված հեղուկ գազի լցակետը սեփականատիրոջ կողմից ապամոնտաժվել է:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, իրավախախտման վնասակար հետևանքները կանխելը, պատճառած վնասը կամավոր վերացնելը, ինչպես նաև հիմք ընդունելով 2025 թվականի սեպտեմբերի 4-ին Խոյի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից կատարված տարածքի ուսումնասիրության հիման վրա կազմված տեղազննության ակտը, տարածքի լուսանկարները՝ Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմի կողմից վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը: Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Ելնելով վերոգրյալից հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 25-րդ, 32-րդ, 33-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտող Վարազդատ Գագիկի Սարգսյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով:

2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73–րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 08
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2025 թվականի N 867-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Մարիաննա Խունոյանի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 8-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Մարիաննա Խունոյանին Խոյ համայնքի Ծիածան գյուղի Ծիածանի խճուղի 24 հասցեում գտնվող հիմնական շինությունում /կադաստրային ծածկագիր 04-053-0022-0007/ տեղադրելու արտաքին գովազդ՝ 2025 թվականի հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածի համար:

2.Խոյի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնին՝ անհատ ձեռնարկատեր Մարիաննա Խունոյանին տալ համապատասխան թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 08
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ.Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբեր 2025 թվականի N 866-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ի N 273-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> 37-րդ հոդվածի 1-ին կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի բնակիչ Վարդան Պետրոսի Միրզախանյանը դիմել է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի 21-րդ փողոց թիվ 1 բնակելի տուն /04-021-0065-0006 կադաստրային ծածկագիր /հասցեում գտնվող իրեն պատկանող / ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 2025 թվականի փետրվարի 12-ի սեղանամատյան 649 / 0.14 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի 21-րդ փողոց թիվ 1 բնակելի տուն /04-021-0065-0006 կադաստրային ծածկագիր /գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Վարդան Պետրոսի Միրզախանյանի /ծնված 16.06.1973թ/ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.14 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ / բնակելի տուն՝ 154,8 ք/մ մակերեսով կառուցված 1970թ., ծածկ՝ 17,2 ք/մ մակերեսով կառուցված 1970թ., խորդանոց՝ 18,1 ք/մ մակերեսով կառուցված 1972թ., թոնրատուն՝ 15,9 ք/մ մակերեսով կառուցված 1972թ., անասնաշենք՝ 33,1 ք/մ մակերեսով կառուցված 1997թ., ջրավազան՝ 2,1 ք/մ մակերեսով կառուցված 1997թ., ջրավազան՝ 1,8 ք/մ մակերեսով կառուցված 1997 թ./, իսկ 464,9 ք/մ մակերեսով ջերմոցը՝ կառուցված 2014թ. և 8 ք/մ մակերեսով ջերմոցը՝ կառուցված 2019թ. թողնել ինքնակամ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեին գրանցել Վարդան Պետրոսի Միրզախանյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի 04-021-0065-0006 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Արշալույս, 21-րդ փողոց թիվ 1 բնակելի տուն:

5.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 18-ի <<ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> թիվ 273-Ա որոշումը:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2025 թվականի սեպտեմբերի 08
Խոյ համայնք գ.Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2025 թվականի N 865-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 22-ի N153-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Աշոտ Կարապետյանի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 8-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Աշոտ Կարապետյանին Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի Մաշտոցի փողոց 84 հասցեում գտնվող հիմնական շինությունում /կադաստրային ծածկագիր 04-087-0035-0022/ զբաղվելու ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրատեսակների վաճառքով՝ 2025 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների համար:

2.Խոյի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնին՝ անհատ ձեռնարկատեր Աշոտ Կարապետյանին տալ համապատասխան թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 08
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2025 թվականի N 864-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դողս գյուղի վարչական տարածքում գտնվող 04-038-0029-0010 կադաստրային ծածկագրով 0,0456 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Դողս գյուղ, Ե. Չարենցի փողոց թիվ 15 կենցաղի տուն:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**

2025թ. սեպտեմբերի 08
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 սեպտեմբերի 2025 թվականի N 863-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով Կարեն Գևորգի Հակոբյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի վարչական տարածքում գտնվող 04-068-0039-0030 կադաստրային ծածկագրով 0,2155 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Մրգաստան գյուղ, 17-րդ փողոց թիվ 23 հողամաս հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ՅԱՅԼՈՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 08
Խոյ համայնք, գ. Գեղակերտ